

և սոցանից ամենամեծը սէրն է: Դա մի համաշխարհային լեզու է, որ խօսում է կրթեալի և անկրթի հետ: ազգերի և զիւնեց հետ: մի անժամանակ անցադիր մարդկանց սրտերի աշխարհը շրջելու:

Արդ, քրիստոնէական սիրով մկրտուած իմ ունկնդիրներ, քրիստոնէական կրօնը սիրոյ կրօն է: խել սէրն ամենուրեք պիտի լինի: ուստի քրիստոնէական կրօնը ոչ վանքերի կամարներում պիտի քարանայ և ոչ կրօնաւորների կրծքում պիտի կաշկանդուի: նա ամէն տեղ պիտի մտնի: դերդաստան, գատարան, ատենան, ապարանք ու խրճիթ, ամէն տեղ պիտի թափանցէ: Մի վայրկեան հանեցէք կրօնից սէրը, և դուք մի անհուն դատարկութիւն կուներեսք: արեան գետերի մի անվերջ հոսանք՝ հրեշտակ մարդուն արիւնը առաջ զայլ դարձած, ատելութեան խաւարը ձեր հոգու վրայ իջած:

Քրիստոնէական սէրն առ մարդ և առ Աստուած՝ անխզելի շղթայով են կապուած: չկայ ձմարիտ սէր առ Աստուած՝ առանց սիրոյ առ մարդ: Փրկիչն Յիսուս մարդկային դերապանց կողմերի մարմնացումն է: կարելի չէ Յիսուս սիրել, երբ մարդն ես ատում, և ընդհակառակն:

Այս ամենից յետոյ յորդորում եմ ձեզ, վառ պահեցէք ձեր հոգու մէջ սէրն իբրեւ սրբազան զօհի նուիրական հուր: վարժուեցէք այդ սիրուն ու կհամոզուիք թէ՛ եթէ ձեր կենաց գրքում կայ մի փայլուն երես, որ սիրտն անհուն հրճուանքով է լցնում: այդ այն վայրկեաններն են, երբ դուք Յիսուսի սիրովն էք սիրուած:

Մայրեր, երբ ձեր դուստր ծնի ձեր հոգու հատոր գաւալի օրօրոցի վերայ և ժպիտն ու համբոյր կաթին մանկան վարդ երեսն ի վար: հեան էլ սէր՝ շննջեցէք մատաղ տկանջին:

Երիտասարդ, երբ սրտիդ ու մտքիդ ընկերին հանդիպես ու կարօտադին կերպով գրդուիք զիրար: շննջիր սէրն է այս:

Հայ մարդ, երբ ազգակիցիդ խոցերի վերայ ճակտիդ քրտունքն ու աչքիդ ցօղը թափուի ու լուանայ, միթաքուիր ու կարդա՛ սէրն է այս:

Հայ ծերուկ, երբ լայնարեւան գերեզմա-

նի քովը կանգնած աչքդ յառած դէպի սիրապատկ խաչն Յիսուսի որից յոյսերի մի առատ ցօղ է իջնում՝ կուրծքդ ու հանդցնում՝ այնտեղ մահու տաղնապար: շննջա՛ գերեզմանից հեռու կանգնած սերնդին սէրն է այս:

Երբ ապաշխարութեան օրերում ձեր աչքերը սեւեռուեց կարմիր խաչափայտին, թող ձեր միմունջն ու աղօթքն այս լինի՝ Տէր իմ Յիսուս, Տէր իմ Յիսուս, ե՛կ, ե՛կ սիրովդ անհուն ախրէ հոգուս*:

Բենիկ վարդապետ



ԺԱՂԱՍՔԱՂ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

(ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔԻՑ)

Մարտիրոսութեան ասպարէզ միշտ կայ: Քրիստոսի սուրբ վիաները կռապաշտութիւնը յաղթահարելու, տապալելու համար պատերազմում էին բռնաւորներն հետ: Ուրիշամբողութիւնը, ըղջախոհութիւնը մեղքի բռնակալներն են, որոնց դէմ պէտք է մարանչել, և ով նրանց յաղթէ՝ միւսոյն է թէ մեհեաններ է կործանում: կռապաշտութիւն ջնջում ու դասակից լինում Քրիստոսի բարւոյ, կատարելապէս խոտովանող նահատակներին:

— Մենք երկնաւոր թագաւորի զինուորներն ենք. երեւէք մեր մարմնին չրպէտք է հանդրոտութիւն տանք, այլ քանի այս աշխարհումն ենք, միշտ պիտի պատերազմենք արդարութեան համար: Ով սիրում է մարմնի հանգստութիւն և փառկութիւն, նորանից հեռու է Աստուծո երկնաւոր:

— Քրիստոնեան պարտաւոր է խաչել իւր անձը հողւոր կատարելութեան համար, անձնատուր չլինելով նիւթապաշտութեան և մարմնի կործանական նպաստող մեղկացուցիչ վայելքների: չպիտի վախենալ ուղից, ծարաւից, ցրտից, ցաւերից, բամբասանքից, պէտք է տոկալ, պէտք է վարժուել ճգնելու հոգւով, մտքով, սրտով, եռանդով և արեւութեամբ մղել պատերազմ սրբութիւնը պաշտպանելու համար:

— Երանելի Յովհան Ոսկեբերանն ասաց. սուրբ

* Խօսում է Երեանի ս. Պօղոս—Պետրոս եկեղեցում 1900 թուի պահոց երկրորդ կիւրակէին:

գերքը կարգալույլ, պէտք է նաև կատարենք քրեականներու:

— Աչքերդ ուղիղ պահիր, լեզուդ զգաստ, խոյս տուր դատարկ բաներ լսելուց: մահդ միշտ աչքի առաջ ունեցիր: մի՛ ճարկանար, հրաժարուի՛ր նիւթապաշտութիւնից և մարմնական հեշտութիւնից, ամեն ժամ աղօթի՛ր և քո ամեն գործերդ և մտածութիւններդ ուղղութեամբ լինեն գէպի Առտուած. ոյ՛ այսպէս անէ, նա կատարեալ կը լինի:

— Եթէ մէկը կամենում է տուն շինել, նախ ժողովում է ամեն տեսակ հարկաւոր նիւթեր, այսպէս և մենք եթէ կամենում ենք կատարեալ լինել, պարտաւոր ենք ամեն տեսակ առաքինութեանց տիրանալ:

— Ամենայն զուշութեամբ աշխատիր չըմեղանել, որ քո մէջ բնակած Առածուն չանարգես և չհեռացնես քեզանից:

— Մի հողագործ մշակ շատ հարստացաւ. նա կամենալով, որ իւր որդիներն էլ շարունակեն իւր մշակութիւնը, ասաց նրանց. դիտէ՛ք, որդիներ, ինչպէս ես հարստացայ. նրանք ասացին. «աղաչում ենք, սովորեցրու»: Հայրն ասաց. «տարուայ մէջ մի օր կայ, ոյ՛ որ այն օրը գործի մէջ լինի շատ կհարստանայ, միայն ծերութիւնից մոռացել եմ չեմ կարող ասել, թէ այդ օր օրն է. ուստի դուք մի ծուլանաք, ամեն օր աշխատեցէ՛ք, որ այն օրհնեալ օրը ձեր ձեռնից չանցնի»: Այսպէս ամեն բանի մէջ միշտ աշխատելով միայն մենք կը գտնենք վերլութեան ճանապարհը:

— Էլն հռոմայեցիք իրենց վարժամ տաճարներն ճակատներին դրում էին. *memento mori!* յիշի՛ր մահը. իսկ եգիպտացիք իրենց նշանաւոր խնոջներում առաջին տեղը բաղմննում էին մի ննջեցեալի մօմիոս— զմռուած դիակ, ինքնամոռացութեան մէջ չընկնելու համար: Արքայամբեր գնաց Աւետոյ երկիրը, նախ իւր համար գերեզման գնաց:

— Մեր սիրտը ոտեղծուած է Առածու բնակարանը լինելու համար:

— Դատարկութիւնը մահ է բերում. դատարկ մարդու աղօթքն անընդունելի է. մարդ պէտք է կարողանայ իւր ձեռքի աշխատանքով գոնէ մէկ ուրիշ կարօտ մարդու կերակրել:

— Մի անգամ հայր Մակարի համար խաղող բերին. թէպէտ շատ կարօտում էր ուտել, բայց իրեն զսպեց, ուղարկեց խաղողը մի այլ հիւանդ եղբօր. սա էլ ստանալով շատ ուրախացաւ, բայց չը ճաշակեց, այլ ուղարկեց մի ուրիշ տկար եղբօր համար: Բանն այնպէս եղաւ, որ սա էլ բարւոք համարեց ուղարկել խաղողը մի այլ տկար միաբանի. սա էլ ուղարկեց միւսիւթարելու համար մի ծեր միաբանի. սա էլ բնգունելով խղճահարուեց ճա-

շակել, այլ լաւ դատեց իրենց մեծին՝ հայր Մակարին՝ նուիրաբերել: Հայր Մակարը վերստին ստանալով վերոյիշեալ խաղողը, որ բոլոր եղբայրներն խցերը պտտել և ոչ ոք չէր ճաշակել, վերջն էլ եկել էր իւր մօտ, գոհութիւն ու փառք տուաւ. Առածու, որ այսպիսի եղբայրութիւն է թագաւորում միաբանների մէջ, ու միւս օրը խաղողը տարաւ եկեղեցի և որպէս օրհնութիւն բաժանեց բոլորին:

— Պտղաբերութեան սկիզբն է ծաղիկը և առաքինութեան սկիզբը համբերութիւնը:

— Արօնաւորի առաքինութիւնները փորձութիւնների մէջ պիտի փայլեն և փառաւորուեն:

— Առաքինութիւնը ամօթխած է. քողարկեալ կամ ծածկեալ առաքինութիւնը մեծ գեղեցկութիւն ունի:

— Մարգահանութիւնը թուլացնում է կրօնաւորի զօրութիւնը և դարձնում է մի ցամաք իր:

— Մնախառութիւնը նման է բաղեղի, որ ծառի ծայրը հասնելով չորացնում է նորան:

Ն. արևղայ Տ. Աւետիքեան

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Մեր ընթերցողներին յայտնի է ռուսաց եկեղեցւոյ հանրածանօթ սպասաւոր հ. Յովհան Սերգիև Առնշտատցու որբակենցաղ վարքի և առատաձեռն բարեգործութեանց հռչակը: Առնշտատը բառիս իսկական նշանակութեամբ ուխտաւեղի է դարձել ռուս հաւատացեալներին համար, որոնք հաղարներով դիմում են ամէն օր Ռուսաստանի նոյն իսկ ամենահեռաւոր կողմերից տեսնելու, լսելու հ. Յովհաննին, խոստովանուելու և հաղորդուելու նորա ձեռքով:

Ամենայն օր հաղարաւորներն են ցանկանում խոստովանուել նորա մօտ և հաղորդուել. բնական է, որ միանգամայն անճարին պիտի լինէր մի մարդու համար այդքան հողուն առանձին առանձին խոստովանեցնել: Այս պատճառով հ. Յովհաննը սահմանել է իւր ծխական եկեղեցւում ընդհանուր, հատարակաց խոստովանութեան օրեր. այդ օրերում ինչպէս և առ հառարակ երբ հ. Սերգիևը պաշտօն է մատուցանում, ժողովորդըն այնպէս է խոնրուում եկեղեցւում, որ ինչպէս ասում են ասեղ քցելու տեղ չէ լինում: